ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 1-Հ

«11» 01 2023 թ. ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԱՏԱԽԱԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 77 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ուժի մեջ մտնելով պայմանավորված, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվության վարման, հաշվետվության ձևի լրացման ու ներկայացման նոր կարգի անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 77 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր

դատախազի 2021 թվականի հուլիսի 8-ի N 54 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (այսուհետ՝ Հրաման) լրացնել նոր՝ N 3 և N 4 հավելվածներով՝ համաձայն հավելված N 1-ի և հավելված N 2-ի:

2. Սահմանել, որ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը հարուցված, ինչպես նաև դատարան ուղարկված այն քրեական գործերով, որոնցով մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը կայացվել է դատական քննություն նշանակելու մասին որոշում, դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվությունը ներկայացվում է Հրամանի N 1-ին և N 2-րդ հավելվածներին համապատասխան:

3. Սահմանել, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո նախաձեռնված քրեական վարույթներով դատախազի աշխատանքի մասին վիճակագրական հաշվետվությունը ներկայացվում է Հրամանի N 3-րդ և N 4-րդ հավելվածներին համապատասխան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ